Խաղ-մրցույթ՝ հակակոռուպցիոն կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի վերաբերյալ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն, իր գործառույթների շրջանակներում մշակում է հակակոռուպցիոն կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրեր և իրականացնում միջոցառումներ, որոնց համատեքստում, հանրային ծառայողների շրջանում, նախատեսվում է կազմակերպել խաղ-մրցույթ՝ հիմնված Հանձնաժողովի կողմից հաստատված՝ «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների» և հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարրերին վերաբերելի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան հոդվածների կարգավորումների վրա: Մրցույթն իրականացվելու է «Կորիզ» կրթական ծրագրի հետ համագործակցությամբ:

Խաղ-մրցույթն անցկացվելու է 2024 թվականի նոյեմբերի 20-30-ը՝ մոբայլ հավելվածի միջոցով՝ թեստային հարցերի եղանակով, իսկ դեկտեմբերի 9-ին՝ Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում տեղի կունենա խաղ-մրցույթի արդյունքների ամփոփումը և հաղթող ճանաչված հանրային ծառայողների լավագույն տասնյակի մրցանակաբաշխությունը: